



«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. գործունեության վերաբերյալ Վարչության

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր, Խորհրդի անդամներ, տիկնայք և պարոնայք,

Ուրախ եմ ողջունել ձեզ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին՝ 2024 թվականի արդյունքներն ամփոփելու նպատակով:

Ընթացիկ օրակարգի շրջանակներում թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել Բանկի նախորդ տարվա գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվությունը և ուրվագծել հետագա զարգացման առանցքային ուղենիշները:

Հիմնական ուշադրությունը կենտրոնացվել էր կորպորատիվ կառավարման համակարգի հետագա կատարելագործման, ռիսկերի կառավարման համակարգի հզորացման, ներքին վերահսկողության արդյունավետության բարձրացման և ներդրումային ակտիվության ընդլայնման շուրջ: Հետևելով տեխնոլոգիական փոխակերպման երկարաժամկետ ռազմավարությանը՝ Բանկը նախաձեռնել էր SS ենթակառուցվածքի աստիճանական արդիականացմանը, հիմնական բիզնես գործընթացների ավտոմատացմանը, ինչպես նաև հաճախորդների հետ փոխգործակցության թվային ուղիների զարգացմանն ուղղված համալիր միջոցառումներ:

Հիմնական իրադարձությունները

- ✓ Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման նպատակով «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը շարունակել է արժեթղթերի թողարկումը և ապահովել շուկայում դրանց հաջող տեղաբաշխումը, իրականացրել է ստորադաս պարտատոմսերի՝ երկրի համար աննախադեպ թողարկում: 2016 թվականից լինելով արժեթղթերի շուկայի ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ AMX AWARDS 2024 մրցանակաբաշխության ժամանակ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը ճանաչվել է լավագույնը երկու անվանակարգերում՝ «Best Equity Issuer on the Exchange» և «Best in Secondary Equity Market»:
- ✓ Կորպորատիվ կառավարման համակարգի հետևողական զարգացման և հաճախորդների սպասարկման որակի բարձրացման գործընթացի շրջանակներում կյանքի են կոչվել անկախ խորհրդատուներ՝ միջազգային KPMG ընկերության և Civitta ընկերության առաջարկները, որոնք միտված են ներքին գործընթացների կազմակերպման և հաճախորդների հետ փոխգործակցության մասով լավագույն համաշխարհային փորձի ինտեգրմանը: Կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման մոնիթորինգի արդյունքների հիման վրա KPMG ընկերությունը Բանկին է տրամադրել բարեփոխումների իրագործման ավարտի վերաբերյալ զեկույց:
«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը դարձել է WEALTH Navigator Awards 2024 մրցանակաբաշխության դափնեկիր և հաղթող է ճանաչվել «Պրեմիում հաճախորդների լավագույն բանկ ԱՊՀ երկրներում» անվանակարգում:
- ✓ Տեխնոլոգիական ենթակառուցվածքի կատարելագործման ռազմավարության շրջանակներում Բանկը գործարկել է առաջին մասնավոր հայկական վճարային UBPAY համակարգը, որը զարգանում է փոխանցումների աշխարհագրության ընդլայնմամբ և ճանաչում է ստացել՝ դառնալով «Դրամական փոխանցումների ցանցերի միջազգային ասոցիացիայի» անդամ: Բարելավվել է մանրածախ հաճախորդների համար նախատեսված բջջային հավելվածի գործիքակազմը, ինչպես նաև գործարկվել է հավելվածի՝ կորպորատիվ հատվածի կարիքներին համապատասխանեցված տարբերակը, որի գործիքակազմը գտնվում է աստիճանական ընդլայնման փուլում: Իրականացվել է «Թեժ գիծ» կենտրոնի տեխնոլոգիական արդիականացում:
- ✓ Շարունակվել են թղթակցային հարաբերությունների ընդլայնման և դիվերսիֆիկացման ուղղությամբ համակարգային աշխատանքները, հաստատվել են հարաբերություններ Միջին, Կենտրոնական և Հարավային Ասիայի, Եվրոպայի երկրների նոր կոնտրագենտների հետ: Միջազգային թղթակցային հարաբերությունները և փոխանցումները, Բանկի ներքին գործընթացներին համապատասխան, մանրամասն ստուգվում են ՓԼ/ԱՖ հավանական ռիսկերի տեսանկյունից:

- ✓ Մասնաճյուղային ցանցի օպտիմալացման քաղաքականության շրջանակներում Բանկը դադարեցրել է «Մխչյան» մասնաճյուղի գործունեությունը՝ ակտիվները և պարտավորությունները փոխանցելով «Արտաշատ» մասնաճյուղին, բացել է «Դավա» և «Բայրոն» մասնաճյուղերը, նախաձեռնել է աշխատանքներ «Գոգավան» նոր մասնաճյուղը բացելու ուղղությամբ, իրականացրել է «Քոչար», «Աշտարակ», «Բագրատունյաց», «Աջափնյակ» մասնաճյուղերի համալիր բարեկարգում: Իրավաբանական անձանց սպասարկման հարմարավետության բարձրացման նպատակով Բանկը հատկացրել է հինգ մասնագիտացված մասնաճյուղ:
- ✓ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը հաջողությամբ անցել է տեղեկատվական անվտանգության և հաճախորդների անձնական տվյալների պաշտպանության ստանդարտներին համապատասխանության վերահավաստագրման աուդիտը:
- ✓ 2024թ.-ին «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը շարունակել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումը՝ աջակցելով կրթական, սպորտային և մշակութային նախաձեռնություններին: Բանկն ընդլայնել է համագործակցությունը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ և աջակցություն է ցուցաբերել Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցին: «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը հանդիսանում է Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր հովանավորը և շարունակաբար աջակցում է Սիսիանում անցկացվող ծյուղոյի մրցաշարերին: Օլիմպիական խաղերի նախշեմին Բանկն իր օժանդակությունն է ցուցաբերել հայ մարզիկներին: Բացի այդ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը դարձել է «Քեզ համար, Հայաստան» հեռուստամարաթոնի մասնակից և աջակցել կայուն զարգացման և ESG համաժողովին:
Միջազգային Agents For Impact ընկերության աջակցությամբ նախաձեռնվել և իրականացվում է նախագիծ՝ Բանկում ESG գործընթացների փուլային ներդրման նպատակով, այդ թվում ESG գծով տեղեկատվության բացահայտման գործողությունների պլանի, քաղաքականության և մեթոդաբանության մշակումը, անձնակազմի վերապատրաստումը և վարկանիշի շնորհումը:
Բանկը նաև հանդիսանում է FINTECH360 միջազգային կոնֆերանսի մշտական գործընկերը, որը համախմբում է ֆինտեխ ոլորտի առաջատար փորձագետներին ամբողջ աշխարհից, ինչպես նաև «Համահայկական ինտելեկտուալ շարժման» հետ ավանդական գործընկերության շրջանակներում օժանդակում է «ԻՆՆ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի անցկացմանը:
- ✓ Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ի՝ ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների B2 վարկանիշը՝ բարելավելով հեռանկարը «կայունից» դեպի «դրական»:

Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին

Համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների՝ Բանկն ամփոփել է 2024 թվականը հետևյալ ցուցանիշներով

- **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 337 մլրդ դրամ՝ ցուցադրելով 48 մլրդ դրամի աճ:
- **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** ավելացել են 36%-ով՝ հասնելով 204 մլրդ դրամի և կազմելով ընդհանուր ակտիվների գրեթե 61%-ը: Արդյունքում **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** գերազանցել են 18.3 մլրդ դրամը:
- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կազմել են 292.4 մլրդ դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները կազմել են 247.5 մլրդ դրամ: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 15.1 մլրդ դրամ՝ տարվա ընթացքում աճելով ավելի քան 60%-ով:
- **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 44.2 մլրդ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 15.16%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (11%):
- 2024 թվականը Բանկի համար նշանավորվեց կայուն զարգացմամբ, ինչպես նաև գործառնական արդյունավետության բարձրացմանը, գործընթացների ավտոմատացմանը, շուկայական դիրքերի ամրապնդմանն ուղղված հավասարակշռված ռազմավարությամբ, ինչի արդյունքում Բանկի **ԶՈՒՏ ԾԱՀՈՒՅԹԸ** կազմել է 8.2 մլրդ դրամ: Տարվա ընթացքում լայնածավալ աշխատանքներ են տարվել ժամկետանց վարկերի հետքերումների ուղղությամբ, արձանագրվել է շուրջ 9.2 մլրդ դրամի չափով փաստացի հետվերադարձ, այդ թվում՝ ընդհանուր 600 մլն դրամի չափով գույքի իրացում:

Մանրաձախ բիզնես

Բանկի բիզնեսի կառուցվածքում գերակշռող է մնացել մանրաձախ ուղղությունը՝ 71% մասնաբաժնով. 2024թ. Բանկի մանրաձախ վարկային պորտֆելը աճել է 40 մլրդ դրամով, կամ 36%-ով և գերազանցել է 147 մլրդ դրամը:

Հիփոթեքը շարունակել է առաջատար դեր ունենալ վարկային պորտֆելի դինամիկայի մեջ. հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակի և Հայաստանի առաջատար շինարարական ընկերությունների հետ համագործակցության շնորհիվ տարեվերջի արդյունքներով Բանկում հիփոթեքային վարկավորման ծավալն աճել է 93%-ով, կամ 30 մլրդ դրամով, պորտֆելը գերազանցել է 62 մլրդ դրամ՝ միաժամանակ ունենալով ժամկետանց պարտավորությունների ամենացածր մասնաբաժինը՝ 0.1%:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Արցախի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրին՝ 500-ից ավելի ընտանիքներին տրամադրելով ավելի քան 6 մլրդ դրամ գումարի չափով հիփոթեքային վարկեր:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել քարտային բիզնեսի զարգացմանը, արդյունքում գործող քարտերի թիվը կազմել է 200,000՝ 10% աճի ապահովմամբ:

2024թ. արդյունքներով ճկուն պայմանների և գործընկերային լայն ցանցի շնորհիվ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը դարձավ առաջատարը հայկական շուկայում POS-վարկերի քանակով:

Բնակչության և բիզնեսի կայուն վստահության մասին է վկայում հաճախորդների հաշիվներում և ավանդներում տեղաբաշխված միջոցների ծավալի աճը. ընդհանուր ծավալը կազմել է 256 մլրդ դրամ՝ 2023թ.-ի ցուցանիշի համեմատ ավելանալով 40 մլրդ դրամով, կամ 18%-ով:

Կորպորատիվ բիզնես

Հաշվետու ժամանակահատվածում կորպորատիվ ուղղությունը դրսևորել է կայուն դրական դինամիկա. տնտեսության առանցքային ոլորտների հետ ակտիվ աշխատանքի շնորհիվ Բանկն ընդլայնել է հաճախորդների բազան, և 2024թ. վերջին կորպորատիվ վարկային պորտֆելի ծավալն աճել է 35%-ով՝ կազմելով 56.2 մլրդ դրամ: Վարկավորման ծավալների աճին զուգահեռ պահպանվել է կորպորատիվ պորտֆելի բարձր որակը, թարմացվել է գրավով չապահովված միկրովարկավորման սքորինգային մոդելը:

Առաջնահերթություններից մեկը շարունակում էր մնալ միկրո, փոքր և միջին բիզնեսին աջակցությունը: Հաշվի առնելով լիզինգային ֆինանսավորման գործիքների նկատմամբ մեծ հետաքրքրությունը՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը ընդլայնել է համագործակցությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ և, դառնալով լիզինգային շուկայի ակտիվ մասնակից, միացել է «Հայաստանի լիզինգատուների ասոցիացիային»:

Բանկը շարունակել է ակտիվորեն աջակցել շրջակա միջավայրի պաշտպանությանը և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը նպաստող նախագծերին:

Կորպորատիվ կառավարում

2024թ. Բանկը շարունակել է կատարելագործել կորպորատիվ կառավարման մեխանիզմները, այդ թվում՝ միջազգային KPMG ընկերության կողմից անկախ գնահատման շրջանակներում ստացված առաջարկությունների իրականացման միջոցով: Կորպորատիվ ընթացակարգերի մեթոդոլոգիական աջակցության որակը բարելավելու նպատակով ստեղծվել է մասնագիտացված ստորաբաժանում, որը նախաձեռնել է կորպորատիվ փաստաթղթերի և ընթացակարգերի աստիճանական կատարելագործում և արդիականացում՝ կորպորատիվ կառավարման լավագույն փորձին համապատասխան:

Կառավարման մարմինների գործունեությանը աջակցելու համար Բանկում ակտիվ գործում են մասնագիտացված հանձնաժողովներ. **Խորհրդին կից՝** Աուդիտի հանձնաժողով, Ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողով, **Վարչությանը կից՝** Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով, Տեղեկային հանձնաժողով, Վարկային սքորինգի հանձնաժողովը: Ակտիվորեն գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովն ու ենթահանձնաժողովները, Վարկային կոմիտեն:

Բանկի մարքեթինգային գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով Վարչությանը կից ստեղծվել է նոր՝ Մարքեթինգի հանձնաժողով, որը կոչված է ապահովելու Բանկի ճիշտ դիրքավորումը և թիրախային լսարանների հետ փոխգործակցության ուղիների նախանշումը:

Կադրային քաղաքականություն

Բանկի կադրային քաղաքականությունը շարունակում էր միտված լինել պրոֆեսիոնալ և մոտիվացված թիմի ձևավորմանը և պահպանմանը: Ակտիվորեն իրականացվել են անձնակազմի որակավորման բարձրացման ծրագրեր՝ առանցքային ոլորտների ընդգրկմամբ, ներառյալ ռիսկերի կառավարումը, համապատասխանության հսկումը և ներքին աուդիտը: Մասնաճյուղային ցանցի փոխակերպման համատեքստում օպերատիվորեն ապահովվել է համալրումն ու ռոտացիան, ինչը հնարավորություն է տվել պահպանելու հաճախորդների սպասարկման անընդհատությունը: 31.12.2024թ.-ի դրությամբ աշխատողների թիվը կազմել է 1052:

Համապատասխանություն ՀՀ ԿԲ պահանջներին

Համապատասխանության տնօրինությունը 2024թ. շարունակել է իրականացնել ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, կարգավորողի նորմատիվ ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների պահպանման ներքին հսկողության գործառույթները: Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի հաստատման և ոչ ռեզիդենտների ֆինանսական հաշիվների վերաբերյալ հաշվետվությունների միասնական ստանդարտի ներդրման շրջանակներում տնօրինությունը ստանձնել է ներքին ընթացակարգերի ներդրման և համապատասխանեցման աշխատանքները համակարգելու գործառույթը: Բացի այդ, մշակվել և ներդրվել է իրավաբանական անձանց համար հաշվի բացման նոր տիպային պայմանագիր-դիմումի ձևը, որը զգալիորեն կրճատել է հաճախորդների սպասարկման ժամանակը: Տարվա ընթացքում շարունակվել են մասնաճյուղային ցանցի գործունեությունը կանոնակարգային և օրենսդրական պահանջներին համապատասխանության ստուգմանն ուղղված համակարգային աշխատանքները, այդ թվում պլանային և նպատակային արտագնա ստուգումները: Սպասարկող անձնակազմի վերապատրաստման շրջանակներում կազմակերպվել են եռամսյակային թեմատիկ սեմինարներ:

2025 թվականի ռազմավարական առաջնահերթությունները

Այս տարի Բանկն իր բիզնես նպատակներին հասնելու համար սահմանել է հետևյալ ռազմավարական ուղենիշները.

- ✓ **տեխնոլոգիականություն՝** սպասարկման թվային և հեռավար միջոցների գործիքակազմի ընդլայնում, ներքին գործընթացների արդյունավետության գնահատման և որոշումների օպերատիվ կայացման վերլուծական գործիքների ինտեգրում, ֆրոնթ- և բեք-օֆիսային համակարգերի գործառութային հնարավորությունների թարմացում, վճարային ծառայությունների զարգացում:
- ✓ **Արդյունավետություն՝** բիզնես գործընթացների օպտիմալացում և ավտոմատացում, ծախսերի կրճատում, մարժայի մեծացում:
- ✓ **Շուկայում դիրքերի ամրապնդում՝** հաճախորդների բազայի և գործիքակազմի ընդլայնում, առաջնահերթ սեգմենտներում մասնաբաժնի աճ, հաճախորդների ակտիվ անցկացում հեռավար սպասարկման միջոցների, արդյունավետ մարքեթինգային հաղորդակցությունների իրականացում:
- ✓ **Ներդրումային գրավչության բարձրացում՝** ֆինանսական կայունության ամրապնդում և մուտք արտասահմանյան արժեթղթերի շուկաներ, Fitch միջազգային գործակալության կողմից վարկային վարկանիշի ստացում, համապատասխանություն ESG սկզբունքներին:

Որդեգրված ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև նպատակ է դրել 2025 թվականին հասնել 12 մլրդ դրամ զուտ շահույթի:

Հարգելի բաժնետերեր, շնորհակալ եմ յուրաքանչյուրիդ ցուցաբերած վստահության, ներգրավվածության և աջակցության համար, իմ երախտագիտությունն եմ հայտնում մեր հաճախորդներին և գործընկերներին՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը ընտրելու համար, Բանկի անձնակազմին՝ ջանասեր աշխատանքի և տարվա արդյունքներին հասնելու գործում իրենց ներդրման համար:

Մինչ նոր հանդիպում և մաղթում եմ բոլորիս հաջողակ տարի:

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ